


ՎԱՀԵ Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

vahetorosyan7@gmail.com

 0000-0002-0717-552X

DOI: 10.59523/1829-4596.2023.1(26)-3

ՀԱՅ-ԼԱՏԻՆ ԵՎ ՀԱՅ-ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1230-ԱԿԱՆ ԹԹ. ՎԵՐՋԻՆ ԵՎ 1240-ԱԿԱՆ ԹԹ.*

Քանալի քառեր՝ Կիլիկյան Հայաստան, Կոստանդին Ա Բարձր-բերդցի, Գրիգոր IX, Գերմանոս II, Հայոց կաթողիկոս, Հռոմի պապ, Կոստանդնուպոլսի պատրիարք:

Ներածություն

1230-ական թթ. վերջին և հաջորդ տասնամյակում հայ-լատին և հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները նկատելիորեն ակտիվ էին: Ինչպես ցույց է տալիս այդ մասին վկայող վավերագրերի ուսումնասիրությունը, խնդրո առարկա հարաբերությունները եղել են փոխկապակցված: Հակադարձելու համար Անտիոքի լատին պատրիարքության գերագահությունն ընդունելու պահանջին, որը Հայոց կաթողիկոսությանը ներկայացվել էր Հռոմի պապից, Ամենայն հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցին (1221–1267), Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթում Ա-ը

* Ներկայացվել է 15.V.2023 թ., գրախոսվել է 18.V.2023 թ. և 19.V.2023 թ., ընդունվել է տպագրության 16.VI.2023 թ.:

(1226–1270) ու Ջաբել թագուհին եկեղեցական միության շուրջ բանակցություններ են սկսում Նիկիայի կայսեր և Կոստանդնուպոլսի հույն պատրիարքի հետ: Հայկական կողմի դիվանագիտական ջանքերը պսակվում են հաջողությամբ, քանզի հայ-բյուզանդական եկեղեցական հնարավոր մերձեցմամբ մտահոգ՝ Հռոմի պապն ի վերջո հրաժարվում է իր պահանջից:

Հայ-բյուզանդական եկեղեցական միության փորձերը 1230-ական թթ. վերջին – 1240-ական թթ.

Ինչպես հայտնի է հայ-բյուզանդական հարաբերությունների նախընթաց շրջանի պատմությունից, եկեղեցական միությամբ մեծ մասամբ շահագրգռված են եղել բյուզանդական արքունիքն ու Կոստանդնուպոլսի պատրիարքությունը: Ուշագրավ է, որ քննվող ժամանակամիջոցում նախաձեռնողը հայկական կողմն էր: Այդ են վկայում Կոստանդնուպոլսի Գերմանոս II (1222–1240) և Մանուել II պատրիարքների (1244–1255) նամակները Հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցուն և թագավոր Հեթում Ա-ին: Այս վավերագրերն ականավոր բյուզանդագետ Հրաչ Բարթիկյանի հայերեն թարգմանության շնորհիվ առավել հասու դարձան հայագետներին¹: Նամակներից պարզվում է, որ Հեթում Ա-ը հայոց և հունադավան եկեղեցիների միություն ստեղծելու նպատակով՝ 1239 թ. կամ ավելի վաղ (հավանաբար նախորդ տարում) Անտիոքի հույն պատրիարքի միջոցով դիմել է Բյուզանդիայի կայսր Հովհաննես Վատացեսին (1222–1254) և Կոստանդնուպոլսի Գերմանոս II պատրիարքին: Հեթում Ա-ի առաջարկից ոգևորված՝ պատրիարքը, կայսեր իմացությամբ, Կիլիկյան Հայաստան է ուղարկում Մելիտենեի Հովհաննես մետրոպոլիտին, որը Կոստանդին Ա Բարձրբերդցուն փոխանցում է Գերմանոս II-ի նամակը: Ի պատասխան՝ հայկական

¹ Բարթիկյան 2006, 27–63: Նամակների մասին տե՛ս նաև Բոզոյան 2016, 66–75:

կողմը հայտնում է, որ Հեթում Ա-ը շուտով պատվիրակներ է ուղարկելու Նիկիա՝ միության խնդիրը քննարկելու: Սակայն, մինչ հայկական պատվիրակությունը կհասնի այնտեղ, Գերմանոս II-ը մահանում է (1240 թ.): Չնայած դրան՝ կայսրը եպիսկոպոսների ժողով է հրավիրում, որն էլ որոշում է դեսպանություն ուղարկել Կիլիկյան Հայաստան: Սակայն, երբ կայսեր ներկայացուցիչները հասնում են Կիլիկիայի հայկական թագավորության մայրաքաղաք Սիս, պարզվում է, որ Հայոց կաթողիկոսն այնտեղ չէ՝ մեկնել է Հռոմկլա: Հեթում Ա-ը բյուզանդական պատվիրակությանը հայտնում է, որ եկեղեցիների միությունը, առանց Հայոց կաթողիկոսի և մյուս եպիսկոպոսների համաձայնության, չի կարող կայանալ: Այս ամենը հարուցում է բյուզանդացիների զարմանքն ու տարակուսանքը. «Քիչ ժամանակ անց քո (Հեթում Ա-ի – Վ.Թ.) պատուիրակները հաւատոյ խոստովանութեան գրով ժամանեցին մեր հզօր, Աստուծոց իմաստնացած սուրբ կայսեր մօտ: Նրա սուրբ թագաւորութիւնը հրաւիրեց մեր ազգի բոլոր եպիսկոպոսներին, քանի որ սուրբ պատրիարք տէր Գերմանոսը մահկանացուն կնքել էր, ծանօթացրեց ձեր հաւատոյ խոստովանութիւնը բովանդակող գրի հետ եւ բոլորի հաւանութեամբ Մելիտենէի սրբազնագոյն մետրոպոլիտին եւ պատրիարքական իշխանաւորներից մէկին թագաւորական ու ժողովական գրութիւններով ուղարկեց՝ իրականացնելու հաւատոյ միութիւնը: Սակայն քեզ մօտ ժամանողները եւ նամակները քեզ յանձնողները փոքր անց ձեռնունայն վերադարձան: Պատճա՞ռը: Քո ասելով՝ ձեր կաթողիկոսը բացակայում է, նա Հռոմկլայում է եւ առանց նրա եւ ձեր բոլոր եպիսկոպոսների կամքի չէք կարող միութիւնն իրականացնել»², - կարդում ենք Մանուել II-ի նամակում:

Քանզի, հազիվ թե Կոստանդին Ա Բարձրբերդցին անտեղյակ լինի բյուզանդական պատվիրակության մոտալուտ այցից, սխալ չի լինի կարծել, որ Սսից նրա բացակայելը եղել է կանխամտած-

² Բարթիկեան 2006, 57:

ված: Այս ամենից ակնհայտ է դառնում, որ հայկական կողմը, նախաձեռնող լինելով հանդերձ, ամեն գնով ձգտել է դադարեցնել ընթացք ստացած բանակցությունները: Ի՞նչ դրդապատճառ(ներ)ով: Գուցե՝ քաղաքական, կամ զուտ եկեղեցական հանգամանքների ազդեցությամբ, թե՛ երկուսը միասին:

Անշուշտ, ստույգ է, որ ինչպես հայ-լատին, այնպես էլ՝ հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները գրեթե միշտ ունեցել են քաղաքական ենթահող, առավել ևս՝ այդ շրջանում: Ամենևին դժվար չէ մատնացույց անել հայկական կողմի քաղաքական շահախնդրությունը հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների այս փուլում, հատկապես, եթե հաշվի առնենք, որ Հովհաննես Վատացեսը նկատելիորեն ամրապնդել էր կայսրության դիրքերը³: Սակայն դրանց կասեցմանն ուղղված ակնհայտ քայլերը ստիպում են կարծել, որ հայկական կողմն առաջնորդվել է այլ դրդապատճառ(ներ)ով:

Հերթում Ա-ին և Կոստանդին Ա Բարձրբերդցուն Մանուել II պատրիարքի հղած նամակից պարզ է դառնում, որ հայերը 1247–1248 թթ. ձմռանը եկեղեցիների միության առաջարկով կրկին դիմել են Բյուզանդիայի կայսրին և Կոստանդնուպոլսի պատրիարքին, որոնք, ինչպես նախորդ անգամ, անթաքույց ոգևորությամբ ընդունել են այն: Նա գրել է. «Այդ ժամանակուանից (նկատի ունի Կոստանդին Ա Բարձրբերդցու նախաձեռնած եկեղեցական միության առաջին փորձը – Վ.Թ.) ցայժմ անցան տարիներ եւ, ինչպէս տեսնում ենք, հաւատոյ [միութիւնն էք վերստին խնդրում. հաւատոյ] համափառ գրութեամբ մեր հօր եւ Աստուծով կառավարող սուրբ կայսեր մօտ ձեր ուղարկած պատուիրակները ժամանեցին: Մենք հարցը անուշադրութեան չմատնեցինք, խառն իրավիճակի վրայ ուշադրութիւն չդարձրեցինք, նրա քննարկումը չձգձգեցինք...»⁴: Հե-

³ Նիկիական կայսրության մասին տե՛ս Жаворонков 1974, 100–121.

⁴ Բարթիկեան 2006, 57:

տաքրքրական է, որ պատրիարքի այս նամակին ժամանակային առումով մոտ է Հեթում Ա-ին Հռոմի Ինոկենտիոս IV պապի (1243–1254) հղած պահանջն իր գերագահությունն ընդունելու և Հայոց եկեղեցում ծիսական ու դավանական բնույթի փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Այդ մասին տեղեկանում ենք Հեթում Ա-ին 1248 թ. Կոստանդին Ա Բարձրբերդցու հղած թղթից, որը Կիլիկյան Հայաստանի թագավորին Հռոմի պապի 1246 թվակիր գրության պատասխանն է և որով կտրականապես մերժվում են Հայոց եկեղեցուն ներկայացված պահանջները⁵:

Այս ամենը հաշվի առնելով՝ Հրաչ Բարթեկյանը հռետորական հարց է բարձրացնում՝ իրավացիորեն կապ տեսնելով հայ-լատին ու հայ-բյուզանդական գրեթե համաժամանակյա հարաբերությունների միջև՝ գրելով հետևյալը. «Արդեօ՞ք 1248 թ Բուզանդիայի եւ Հռոմի՝ Կիլիկիայում միաժամանակ ծաւալած, կարելի է ասել, դիւանագիտական քայլերը (որոնց նախաձեռնողը Կիլիկիայի աշխարհիկ եւ եկեղեցական ղեկավարներն էին) ժամանակի առումով պատահական զուգադիպութիւն էին կամ մէկը միւսին կանխելու եւ երկրում իրենց ազդեցութիւնը տարածելու փորձեր, թէ՞ Կիլիկիայի հայոց ղեկավար աւագանու դիւանագիտական քայլեր»⁶: Կարծում ենք՝ փոխկապակցված պետք է համարել հայ-լատին և հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների ոչ միայն 1246–1248 թթ., այլ նաև 1230-ական թթ. վերջի դրվագը:

Անտիոքի լատին պապրիարքության գերագահական նկրդությունները Հայոց կաթողիկոսության նկատմամբ

1230-ական թթ. վերջի հայ-լատին եկեղեցական հարաբերությունները քանիցս արծարծվել են մասնագիտական գրականության մեջ: Այդ մասին վկայող վավերագրերը, որոնք մի կողմից՝

⁵ Գիրք թղթոց 1901, 503–509:

⁶ Բարթեկյան 2006, 35:

Հռոմի Գրիգոր IX պապի (1227–1241), մյուս կողմից՝ Կոստանդին Բարձրբերդցու, Հեթում Ա-ի և Զաբել թագուհու փոխանակած նամակներն են, հայերեն թարգմանությամբ առաջին անգամ շրջանառության մեջ է դրել թեանտինյան հայտնի քարոզիչ Կղեմես Գալանոսը տակավին XVII դարում⁷։ Դրանցից պարզվում է, որ Անտիոքի լատին պատրիարքը 1238 թ. դիմել է Հռոմի պապին՝ խնդրելով Հայոց կաթողիկոսին հարկադրել՝ ընդունելու իր գերազահությունը։ Գրիգոր IX-ը բավարարել է այդ խնդրանքը։ Այդ մասին տեղեկանում ենք Ապամեայի և Մամեստիայի արքեպիսկոպոսներին նրա հղած նամակից, որով Հռոմի պապը նրանց գործուղել է Հայոց կաթողիկոսի մոտ՝ հորդորելով ենթարկվել Անտիոքի լատին պատրիարքի պահանջին, իսկ մերժման պարագայում՝ հիմնավորել այն⁸։

Հաջորդ վավերագիրը, որին անդրադառնում է Կղեմես Գալանոսը, Հեթում Ա-ին և Զաբել թագուհուն Հռոմի պապի հղած պատասխան նամակն է, որը հայտնում է ծիսական փոփոխություններ կատարելու հայկական կողմի պատրաստակամության մասին⁹։ Խոսքն այնպիսի ծեսերի մասին է, որոնք նախկինում առկա էին եղել Հայոց եկեղեցու ծիսակարգում, սակայն ինչ-ինչ պատճառներով դադարել էին կատարվել։

Քննության առարկա թեմային վերաբերող վերջին փաստաթուղթը, որն առկա է Կղեմես Գալանոսի երկում, Գրիգոր IX-ի պատասխան նամակն է Կոստանդին Ա Բարձրբերդցուն՝ նրան պալիում, խույր և մատանի շնորհելու վերաբերյալ¹⁰։

⁷ Կղեմէս Գալանոս 1650, 373–376:

⁸ Կղեմէս Գալանոս 1650, 374: Acta Honorii III (1216–1227) et Gregorii IX (1227–1241) 1950, 319.

⁹ Կղեմէս Գալանոս 1650, 374–375: Acta Honorii III (1216–1227) et Gregorii IX (1227–1241) 1950, 333.

¹⁰ Կղեմէս Գալանոս 1650, 375–376: Acta Honorii III (1216–1227) et Gregorii IX (1227–1241) 1950, 335–336.

Կղեմես Գալանոսի հրապարակած վավերագրերից ամենևին պարզ չի դառնում, թե ինչ հանգուցալուծում է ստացել Անտիոքի պատրիարքի հարուցած խնդիրը. Հայոց կաթողիկոսն ընդունե՞լ է նրա գերագահությունը, թե՞ ոչ: Մինչդեռ, Ապամեայի և Մամեստիայի եպիսկոպոսներին Գրիգոր IX պապի հասցեագրած նամակից հետո Հեթում Ա-ին և Զաբել թագուհուն նույն պապի հղած պատասխանի, ինչպես նաև Կոստանդին Ա Բարձրբերդցուն իշխանական տվչություն խորհրդանշող պալիումի, խույրի և մատանու փոխանցումը հավաստող նամակի վկայակոչումը կարող է տպավորություն թողնել, որ Հայոց կաթողիկոսը, կարծես, ընդունել է Հռոմի պապի պահանջն Անտիոքի լատին պատրիարքի գերագահությունը ճանաչելու վերաբերյալ:

Ծանոթ լինելով միայն Կղեմես Գալանոսի հրապարակած նամակներին և վստահ լինելով, որ Հայոց կաթողիկոսը, այդուհանդերձ, արձագանքել է¹¹ Գրիգոր IX պապին, Մաղաքիա Օրմանյանը կարծել է, որ նրան ուղղված պատասխանը հայտնի «Դաշանց թողթն» է¹²: Այս կարծիքի համար հիմք է ծառայել Հեթում Ա-ին և Զաբել թագահուն Հռոմի պապի հղած նամակում «Դաշանց թղթի» գլխավոր կերպարներից Գրիգոր Լուսավորչի և Սեդեեստրոս պապի (314–334) վկայակոչումը: Բացի այդ, «Դաշանց թղթում» արձանագրված է Արևելքի պատրիարքությունների (այդ թվում՝ Անտիոքի) շրջանում Հայոց կաթողիկոսի զբաղեցրած գերագահ դիրքի մասին¹³, որը, փաստորեն, Անտիոքի լատին պատրիարքի պահանջի

¹¹ Հայոց կաթողիկոսի պատասխանը հայտնի չէ: Ամենևին բացառված չէ, որ այն չի եղել, և հարցի արձարծումն ավարտվել է Կոստանդին Ա Բարձրբերդցուն և Ապամեայի ու Մամեստիայի եպիսկոպոսների միջև տեղի ունեցած քննարկմամբ:

¹² **Օրմանեան** 2001, սյունակ 1887:

¹³ Նկատի ունենք վավերագրի հետևյալ հատվածները. «...*ձեռնադրեցաք (Սեդեեստրոս պապը – Վ.Թ.) զկաթողիկոսն հայոց զսուրբն Գրիգոր՝ պապ և պատրիարք և հայրապետ, հրամանատիան փեղեղական ժողովս, համապատիւ մեր հզար աթոռոյս և Երուսաղէմացոյն և Անփիոքացոյն և Աղէքսանդրա-*

մերժումն է: Այս ամենը հաշվի առնելով՝ Մադաքիա Օրմանյանը կարծում է, որ «Դաշանց թուղթը» գրվել է հենց այս խնդրի առթիվ¹⁴:

Մասնագիտական գրականության մեջ քաղաքացիություն ստացած տեսակետի համաձայն՝ «Դաշանց թուղթը» ստեղծվել է Լևոն Ա Մեծագործի (1187–1219) գահակալության շրջանում՝ արտագույնում այդ ժամանակվա իրողությունները¹⁵: Սակայն դա ամենևին չի նշանակում, որ այն, որպես Հռոմի պապին ուղղված պատասխան, կամ հայ-լատին եկեղեցական միության վերաբերյալ Հայոց եկեղեցու դիրքորոշման արտահայտություն, չէր կարող ներկայացվել նաև 1230-ական թթ. վերջին: Ի դեպ, Գրիգոր IX-ի նամակում Գրիգոր Լուսավորչի և Սեդեքեստրոս պապի վկայակոչումը հիմք է տալիս պնդելու, որ «Դաշանց թուղթն» այդ ժամանակ, այդուամենայնիվ, ներկայացվել է, կամ՝ ծանոթ է եղել Հռոմի պապին: Գոյություն ունի այս տեսակետը հաստատող մեկ այլ կովան ևս, որին կանդրադառնանք ստորև: Ի դեպ, «Դաշանց թուղթը» հայ եկեղեցական ու քաղաքական շրջանակներում պահպանվել է բավական երկար ժամանակ և պարբերաբար վկայակոչվել-օգտագործվել՝

ցոյն» (Pogossian 2010, 392), «Եւ պապրիարգարանքն երեքին՝ Երուսաղէմիի և Անտիոքիայի և Աղէքսանդրիայ, յորժամ պապրիարգ ձեռնադրեն, կամաք և ընտրութեամբ հայոց հայրապետին լինիցի: Եւ որ ոք նոր նստցի յաթոռ պապրիարգութեան, զդաւանութիւն հաւարոյն իւրոյ, զոր պարտ էր մեզ ծանուցանել, զայն հայոց հայրապետին ծանուցէ, զի զնա (Սբ Գրիգոր Լուսավորչին – Վ.Թ.) կարգեցաք մեզ (Սեդեքեստրոս պապի – Վ.Թ.) գլխաւորիսան և հրամանահան ի վերայ ամենայն ասիական միջնաշխարհիդ, և յելս արևու...» (Pogossian 2010, 396):

¹⁴ **Օրմանեան** 2001, սյունակ 1887: Այս տեսակետը տե՛ս նաև Անապատական 1973, 140–141:

¹⁵ Այս հարցի քննությունը տե՛ս **Բարթիկյան** 2004, 65–116: **Sirinian** 2003, 79–99. **Շիրինյան** 2006, 53–77: **Halfter** 1996: **Halfter** 2009, 71–74: «Դաշանց թղթի» քննական հրատարակությունն արժեքավոր ուսումնասիրությամբ տե՛ս Pogossian 2010:

Հռոմի պապական աթոռի հետ Հայոց կաթողիկոսների վարած բանակցություններում¹⁶:

Գրիգոր IX պապի «անհայտ» նամակները Հերթում Ա-ին, Ջաբել թագուհուն և Կոստանդին Ա Բարձրբերդցուն

Վերադառնալով Կղեմես Գալանոսի վկայաբերած նամակներին՝ նշենք, որ դրանք խնդրին վերաբերող միակ վավերագրերը չեն: Նա, անշուշտ, քաջաճանոթ էր Հռոմի պապական դիվանի փաստաթղթերին, սակայն, կամա թե ակամա, չի անդրադարձել Անտիոքի լատին պատրիարքի հարուցած խնդրին առնչվող մյուս վավերագրերին, որոնք քննության առարկա հարցի լիարժեք ուսումնասիրման բանալի են: Դրանց շարքում հատկապես կարևոր են Գրիգոր IX պապի նամակները՝ հասցեագրված Անտիոքի լատին պատրիարքին, որոնք մեծապես նպաստում են հարցի համակողմանի ու լիարժեք քննությանը¹⁷:

Այսպես, այդ վավերագրերից պարզ է դառնում, որ Անտիոքի լատին պատրիարքի գերագահությունն ընդունելու պահանջը ներկայացվել է ոչ միայն Հայոց կաթողիկոսին, այլև այդ պատրիարքությունում գործող հույն, հայ ու վրացի հոգևորականներին: Նրանց հասցեագրած 1238 թ. հունիսի 26-ի նամակում Գրիգոր IX պապը հորդորում է անվերապահորեն ճանաչել տեղի լատին պատրիարքի իշխանությունը¹⁸: Դատելով մյուս վավերագրերից՝ Գրիգոր IX-ի և Անտիոքի լատին պատրիարքի թիրախում նախ և առաջ եղել է Անտիոքի հույն պատրիարքությունը, քանի որ հենց նա էր լատին պատրիարքի իշխանության գլխավոր սպառնալիքը: Նույն օրը՝

¹⁶ Հովհաննիսյան 1957, 58–92:

¹⁷ Այս նամակներին, առանց նրանց բովանդակությունը մանրամասն ներկայացնելու, անդրադարձել է Շառլ Ֆրաեգեն՝ եզրակացնելով, որ խնդիրը հանգուցալուծվել է հօգուտ հայկական կողմի (հայկական անկախության), այսինքն՝ Հայոց կաթողիկոսությունը պահպանել է իր ինքնիշխանությունը (Frazee 1976, 40).

¹⁸ Acta Honorii III (1216–1227) et Gregorii IX (1227–1241) 1950, 320.

1238 թ. հունիսի 26-ին գրված մեկ այլ նամակով՝ Հռոմի պապը հայտնում է, որ նախկինում Անտիոքի հունադավան պատրիարքությանը պատկանող տարածքները, նաև նրանք, որոնք ազատագրվելու են մուսուլմաններից, պետք է ենթարկվեն լատին պատրիարքի իշխանությանը¹⁹:

Փաստորեն Անտիոքի լատին պատրիարքության դեմ պայքարում հունական պատրիարքության և Հայոց կաթողիկոսության շահերը համընկնում էին, ինչը, անշուշտ, կարող էր նպաստել նրանց համագործակցությանը: Ուստի, սխալ չի լինի կարծել, որ հենց այս հանգամանքը հաշվի առնելով է Կոստանդին Ա Բարձրբերդցին, անշուշտ, Հեթում Ա-ի համաձայնությամբ, եկեղեցիների միության առաջարկով դիմել Նիկիայի կայսր Հովհաննես Վատացեսին ու Կոստանդնուպոլսի Գերմանոս II պատրիարքին: Ասվածն անուղղակի հաստատվում է նաև այն հանգամանքով, որ Հայոց կաթողիկոսն իր առաջարկը Հովհաննես Վատացեսին և Գերմանոս II պատրիարքին ուղարկել է հենց Անտիոքի հույն պատրիարքի²⁰ միջոցով:

Այժմ անդրադառնանք վերին արված այն հարցադրմանը, թե ինչու հայկական կողմը հայ-բյուզանդական եկեղեցական միության բանակցությունները նախաձեռնելով հանդերձ, դադարեցրեց դրանք: Այս առթիվ Հրաչ Բարթիկյանը գրում է. «Ինչպես երեւում է (նամակների ուսումնասիրութիւնից – Վ.Թ.), դիմելով Բիւզանդիային եկեղեցիների միութեան խնդրով, լինելով հարցը բարձրացնողներն ու նախաձեռնողները, հայերը զգուշանում էին բիւզանդական կողմի խիստ միակողմանի դիրքորոշումից: Յոյները որեւէ դաւանական զիջման չէին գնում եւ հայերին համարում էին հերետիկոսներ, որոնք պէտք է անվերապահօրէն ընդունեն Քաղկեդոնը: Հայե-

¹⁹ Acta Honorii III (1216–1227) et Gregorii IX (1227–1241) 1950, 321.

²⁰ Հրաչ Բարթիկյանը ենթադրում է, որ խոսքը Դորոթեոսի (1219–1254) մասին է: Սակայն, որպես Անտիոքի հույն պատրիարք, այդ ժամանակ հիշատակվում է նաև Սիմեոն Բ-ը (**Ղազարյան** 2020, 398):

րը, տեսնելով բիզանդական կողմի կարծի դիրքորոշումը դաւանական խնդիրներում եւ գիտակցելով սեփական դաւանությանը հարազատ մնալու անհրաժեշտութիւնը, յոյս էին տածում փոքր զիջումների գնով գոնէ ժամանակաւորապէս ապահովել տուեալ պահի իրենց քաղաքական ու ռազմական պահանջները: Էական զիջումների մասին խօսք անգամ լինել չէր կարող: Դարեր շարունակուող դաւանական պայքարն առաւել եւս ամրապնդել ու բիւրեղացրել էր սեփական արժէքների համակարգը հայ հասարակութեան ամենատարբեր խաւերի մէջ եւ որեւէ մէկը, ով կը փորձէր գնալ յոյն կամ լատին եկեղեցիներին ենթարկուելու քայլին, նախօրոք դատաւարտուած էր կատարեալ ծախսողման»²¹: Իրապես, թե՛ Գերմանոս II-ի և թե՛ Մանուէլ II-ի նամակներում կային Հայոց եկեղեցուն հասցեագրված քրիստոսաբանական բնույթի մեղադրանքներ և «երկու կամքի և երկու ներգործության» վարդապետությունն ընդունելու պահանջ²², որին Հայոց եկեղեցին կտրականապես դեմ էր: Այս ամենը, անշուշտ, ընթացք ստացած բանակցությունները միակողմանի դադարեցնելու բավարար հիմք էր, սակայն, ինչպես ստորև կ'տեսնենք, կային նաև այլ, ոչ պակաս զորեղ դրդապատճառներ:

Հրաչ Բարթիկյանը կարծում է, որ հայկական կողմը, հաշվի առնելով այդ ժամանակ Կոստանդնուպոլսի պատրիարքության տկար վիճակը, հույս է ունեցել, որ Բյուզանդիան կնահանջի եկեղեցիների միությանը վերաբերող իր կարծի դիրքորոշումից և կգնա փոխզիջման, ինչը, փաստորեն, տեղի չունեցավ²³: Այդ դեպքում, իհնչ անկալիքով է հայկական կողմը երկրորդ անգամ դիմել Նիկիայի կայսրին և Կոստանդնուպոլսի պատրիարքին: Գերմանոս II-ին և Մանուէլ II-ին Կոստանդին Ա Բարձրբերդցու ուղարկած նա-

²¹ Բարթիկյան 2006, 33–34:

²² Բարթիկյան 2006, 39–61:

²³ Ի դեպ, գրեթե նույն պատճառով (նկատի ունենք փոխզիջում չկատարելը) ապարդյուն անցավ նաև 1230-ական թթ. լատին ու հունաղական եկեղեցիների միության փորձը (Жаборовиков 1974, 106–108).

մակները, ցավոք, չեն պահպանվել, ուստի, դժվար է ստույգ ասել, թե Հայոց կաթողիկոսն ինչ առաջարկներ է ներկայացրել այդ պատրիարքներին: Չնայած դրան՝ մեկ բան աներկբա է. հայ-բյուզանդական եկեղեցական միությունը չէր ստեղծվելու Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը սահմանափակելու հաշվին, այսինքն՝ Հայոց կաթողիկոսի կողմից Կոստանդնուպոլսի հույն պատրիարքի գերագահությունն ընդունելով:

Իրապես, իմաստազուրկ կլիներ Անտիոքի լատին պատրիարքի պահանջին հակադարձել քաղկեդոնական մեկ այլ պատրիարքության գերիշխանությունն ընդունելով: Գուցե, ինչպես 1165–1178 թթ. հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների ժամանակ, այս անգամ ևս Հայոց կաթողիկոսությունը ձգտել է իշխանություն ստանալ Անտիոքի հույն պատրիարքության նկատմամբ: Ներսես Լամբրոնացուն վերագրվող «Գլխադրութիւնք հոռոմոց զորս պահանջեն առ ի մէնջ ի պէտս խաղաղութեան, ընդ որս եւ լուծմունք առննթեր եղեալ» վերտառությամբ վավերագրում կարդում ենք. «*Եւ կալցէ զաթոռն Անտիոքայ կաթողիկոսն Հայոց. եւ զոր ինչ եկեղեցիք եւ սահմանք են ընդ իշխանութեամբ նորա յԱրևելս եւ յԱրևմուտս. եւ նոյն յաջորդեսցէ հրամանաւ թագաւորիդ զՀայոց սեռն, այլ՝ մինչև ի սպառ*»²⁴:

Լամբրոնացին այդ առաջարկը, ի թիվս այլ դրույթների, պետք է ներկայացնեն Հռոմկլայի 1178 թ. եկեղեցական ժողովում՝ ի պատասխան բյուզանդական կողմի ներկայացրած ինը պահանջների²⁵: Անտիոքի հույն պատրիարքության նկատմամբ գերագահությամբ, անշուշտ, կամրագրվեր Հայոց կաթողիկոսի իշխանությունն Ընդհանրական եկեղեցու նվիրապետական աստիճանակարգի առաջին՝ պատրիարքական աթոռներին վերապահված տեղում²⁶: Ի

²⁴ Պալճեան 1878, 266, հմմտ. Բոզոյան 1995, 204:

²⁵ Բոզոյան 1995, 204–205:

²⁶ Այս մասին մանրամասն տե՛ս Հարությունյան 1999, 250–260:

դեպ, խաչակիրների կողմից Կոստանդնուպոլսի նվաճումից հետո Անտիոքի հույն պատրիարքության նկատմամբ գերագահություն ստանալու համար իրադրությունը բարենպաստ էր, եթե հաշվի առնենք, որ Սիմեոն II պատրիարքը (1206–1242) ժամանակավորապես ապաստանել էր Կիլիկյան Հայաստանում²⁷: Սակայն, 1230–1240-ական թթ. Անտիոքի հույն պատրիարքության նկատմամբ գերիշխանության հասնելը, եթե հաշվի առնենք այդ ժամանակ Նիկիական կայսրության հզորացումը, առավել դժվար էր, եթե ոչ՝ անհնարին:

Այս պարագայում արդեն միակ հիմնավոր դրդապատճառը, որը Հայոց կաթողիկոսին մղել է եկեղեցիների միության առաջարկով դիմել Նիկիայի կայսրին ու Կոստանդնուպոլսի պատրիարքին, եղել է Հռոմի պապի և Անտիոքի լատին պատրիարքի դեմ հակալշիռ ստեղծելը:

Ինչպես վերը նշեցինք, Կղեմես Գալանոսը հրապարակել է այդ խնդրին վերաբերող վավերագրերից միայն մի քանիսը, մինչդեռ պահպանվել է քննության առարկա հարցին առնչվող ևս երկու նամակ, որոնք սույն թեմայի լիարժեք քննության համար առանցքային կարևորություն ունեն: Խոսքը վերաբերում է 1239 թ. մարտին Հեթում Ա-ին և Զաբել թագուհուն, ինչպես նաև Կոստանդին Ա Բարձրբերդցուն Գրիգոր IX պապի հղած նամակներին:

Այսպես, արքային և թագուհուն հասցեագրած նամակում Գրիգոր IX-ը գրում է. «Նրանց, որոնց պատշաճում է քարոզելու իրավունք Հայոց թագավորության մեջ:

Նույնպես նաև Հայոց թագավորին և թագուհուն:

Քանզի որևէ մեկին, բացի նրանից, ով կանչվում է Աստծո կողմից ինչպես Ահարոնը, օրեն չէ պաշտոն ստանձնել և քարոզել հավատացյալներին, եթե նա ուղարկված չէ Ժողովրդի մոտ, մենք ներկաների իշխանությամբ խստորեն արգելում ենք, որ չլինի թե մեկը Հայոց թագավորության մեջ առանց Առաքելական Աթոռի կամ կա-

²⁷ Ղազարյան 2020, 398:

թողիկոսի և կամ այս նույն թագավորության այլ բարձրաստիճան հոգևորականների կարգադրության, հատուկ թույլտվությամբ, ինչպես նրանցից յուրաքանչյուրը, որ արտոնելու իրավունք ունի իրեն ենթակա տարածքներում, ստանձնի քարոզելու ծառայություն»²⁸:

Կոստանդին Ա Բարձրբերդցուն հասցեագրած նամակով Հռոմի պապը հաստատում է Հայոց կաթողիկոսության իրավունքները Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի²⁹ և, որ ամենակարևորն է քննվող խնդրի տեսանկյունից, Ասորիքում (իմա՝ Անտիոքի պատրիարքությունում) ունեցած տարածքների, այսինքն՝ հայկական թեմերի վրա, որոնք, ինչպես նամակում նշված է, նախկինում ևս պատկանել են Հայոց եկեղեցուն³⁰:

Այս երկու նամակներով Հռոմի պապական աթոռը, փաստորեն, ճանաչում էր Հայոց կաթողիկոսության իշխանությունը Կիլիկիայի հայկական թագավորությունում, ինչպես նաև Ասորիքում գտնվող հայկական թեմերի վրա: Սա նշանակում է, որ Հռոմի պապը հրաժարվում էր Անտիոքի լատին պատրիարքին տված հավասար

²⁸ Acta Honorii III (1216–1227) et Gregorii IX (1227–1241) 1950, 334. Լատիններեն տեքստի թարգմանության համար շնորհակալություն ենք հայտնում Մաշտոցյան Մատենադարանի և ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ.գ.թ. Տիգրան Սիրունյանին:

²⁹ Գրիգոր IX-ը գուցե կարող էր բավարարվել միայն Անտիոքի հայկական թեմերի նկատմամբ Հայոց կաթողիկոսության իշխանության ճանաչմամբ և շրջանցել Երուսաղեմում Հայոց եկեղեցուն պատկանող սրբատեղիների հարցը, սակայն նամակում հատուկ նշվում է Սրբոց Հակոբյանց վանքի նկատմամբ հայոց կաթողիկոսի իշխանության ճանաչումը: Դա լրացուցիչ և հիմնավոր փաստարկ է այն տեսակետի օգտին, որ 1230-ական թթ. վերջին «Դաշանց թուղթը» կրկին ներկայացվել է Հռոմի պապական աթոռին: Բանն այն է, որ «Դաշանց թղթում» արձանագրված են Երուսաղեմի որոշ սրբատեղիների, այդ թվում՝ Սրբոց Հակոբյանց վանքի նկատմամբ Հայոց եկեղեցու իշխանությունը (Pogossian 2010, 109–112, 406, 408):

³⁰ Acta Honorii III (1216–1227) et Gregorii IX (1227–1241) 1950, 334. Անտիոքի պատրիարքությունում գտնվող հայկական թեմերի մասին տե՛ս **Ղազարյան** 2020, 389–416:

տիացումից, որ կնպաստի Հայոց կաթողիկոսության նկատմամբ նրա գերագահության հաստատմանը (նկատի ունենք Ապամեայի և Մամեստիայի եպիսկոպոսներին հղած նամակը):

Այսինքն, եթե հիմնավոր է այն տեսակետը, որ հայ-բյուզանդական եկեղեցական միության բանակցությունները նախաձեռնելու գլխավոր դրդապատճառն Անտիոքի լատին պատրիարքության ներկայացրած պահանջի դեմ հայ-բյուզանդական հակակշիռ ստեղծելն էր, ապա այս պարագայում դրանք դառնում են ոչ նպատակահարմար: Ստեղծված իրավիճակում հայկական կողմին չէր մնում այլ բան, քան հնարավորինս շուտ դադարեցնել արդեն իսկ ընթացք ստացած հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունները:

Եզրակացություններ

1239 թ. մարտին Հեթում Ա-ին և Զաբել թագուհուն, ինչպես նաև Կոստանդին Ա Բարձրբերդցուն Գրիգոր IX-ի հղած նամակներով, որոնք բացակայում են Կղեմես Գալանոսի հայտնի աշխատությունում, ամբողջանում է իրադարձությունների շղթան, իսկ դրանց տրամաբանական կապը՝ դառնում առավել հստակ:

Եթե նամակագրությունում վկայված գործողությունները դասավորենք ժամանակագրական հաջորդականությամբ, ապա կստանանք հետևյալ պատկերը.

- 1238 թ. Անտիոքի լատին պատրիարքը դիմում է Հռոմի պապին՝ Հայոց կաթողիկոսից պահանջելու ընդունել իր գերագահությունը:

- Դրան ի պատասխան՝ Կոստանդին Ա Բարձրբերդցին 1238 թ. եկեղեցիների միության շուրջ բանակցություններ է սկսում Նիկիայի կայսրության և Կոստանդնուպոլսի պատրիարքության հետ՝ որպես հակակշիռ Անտիոքի լատին պատրիարքի և Հռոմի պապի պահանջի:

▪ Միևնույն ժամանակ, հայկական կողմը շարունակում է անմիջական կապը Հռոմի պապական աթոռի հետ՝ փորձելով փոխզիջումներով հասնել խնդրի հանգուցալուծմանը: Հենց այդ նպատակին են ծառայել Գրիգոր IX-ին Հեթում Ա-ի և Զաբել թագուհու հղած նամակը Հայոց եկեղեցում ծիսական փոփոխություններ կատարելու պատրաստականության մասին և կաթողիկոսի դիմումն իրեն պալիում, խույր և մատանի շնորհելու վերաբերյալ³¹: Զարուհի Պողոսյանը կարծում է, որ Հռոմի պապն իր դիրքորոշումն այս հարցում վերանայել և հոգուտ Հայոց եկեղեցու որոշում է կայացրել Հեթում Ա-ի և Զաբելի խնդրանքով³²: Ի դեպ, Հեթում Ա-ին և Կոստանդին Ա Բարձրբերդցուն Գրիգոր IX-ի հղած վերոնշյալ երկու նամակները թվագրվում են 1239-ի մարտի առաջին տասնօրյակով, ինչը նշանակում է, որ հայկական կողմի առաջարկներն արվել են միաժամանակ (արդի տերմինաբանությամբ՝ մեկ փաթեթով)՝ կա՛մ նույն թվականի սկզբին, կա՛մ նախորդ տարվա երկրորդ կեսին:

▪ Հայ-բյուզանդական եկեղեցական մերձեցումը կանխելու համար՝ Հռոմի պապը հրաժարվում է Հայոց կաթողիկոսին ներկայացրած պահանջից և ճանաչում նրա գերագահ իշխանությունը Կիլիկյան Հայաստանում ու Ասորիքի հայկական թեմերի վրա: Ռազ-

³¹ Հայոց կաթողիկոսների կողմից Հռոմի պապից իշխանական տվչությունը խորհրդանշող պալիում, խույր և մատանի խնդրելու դրդապատճառները քննել ենք մեր՝ «Ո՞ր կաթողիկոսին է Դաշանց թղթում կերպավորել Սբ Գրիգոր Լուսավորիչը» վերտառությամբ հոդվածում (**Թորոսյան** 2021): Այս պարագայում ևս Կոստանդին Ա Բարձրբերդցին առաջնորդվել է քաղաքական դրդապատճառներով: Որ այս տեսակետը հիմնավոր է, փաստվում է, թեկուզ, հենց այն իրողությամբ, որ արդեն 1248 թ., նոր աշխարհաքաղաքական իրողությունների ազդեցությամբ (նկատի ունենք մոնղոլական արշավանքները, հատկապես՝ հայ-մոնղոլական դաշինքի նախապատրաստությունը), Հայոց եկեղեցին, ի դեմս նույն հայրապետի, կտրականապես մերժում է Հռոմի պապի գերագահությունն ընդունելու պահանջը՝ առաջ քաշելով առաքյալների համապատվության թեզը (Գիրք թղթոց 1901, 503–509):

³² **Pogossian** 2010, 98.

մաքաղաքական իրադրությունը նպաստավոր էր հայկական կողմի համար: Բանն այն է, որ 1239 թ. Գրիգոր IX պապն ակտիվորեն զբաղված էր խաչակրաց հերթական արշավանքի կազմակերպմամբ և, բնականաբար, չէր կարող սրել հարաբերությունները Կիլիկիայի հայկական թագավորության հետ:

- Չեզոքացնելով Անտիոքի պատրիարքից եկող սպառնալիքը՝ հայկական կողմը դադարեցնում է իր նախաձեռնած հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անապատական 1973, Համառոտ պատմություն հայ-լատին յարաբերութեանց (սկիզբէն մինչեւ 1382), Անթիլիաս-Լիբանան, 227 էջ:

Բարթիկյան Հ. 2004, «Դաշանց թուղթ». կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը, «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 2, էջ 65–116:

Բարթիկյան Հ. 2006, Հայ-բիւզանդական եկեղեցական յարաբերութիւնները փաստաթղթերում, Կոստանդնուպոլսի պատրիարքներ Գերմանոս II-ի (1222–1240) եւ Մանուէլ Բ-ի (1244–1255) թղթերը Հերթում Ա թագաւորին եւ Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսին, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Գ, Երևան, էջ 27–63:

Բոզոյան Ա. 1995, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165–1178 թթ.), Երևան, 256 էջ:

Բոզոյան Ա. 2016, Կիլիկյան Հայկական պետությունը Բյուզանդիայի կայսերական և պատրիարքական վավերագրերում (ընդհանուր ակնարկ), «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորումների ընկալումներում», Երևան, էջ 66–75:

Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, 584 էջ:

Թորոսյան Վ. 2021, Ո՞ր կաթողիկոսին է «Դաշանց թղթում» կերպավորել Սբ Գրիգոր Լուսավորիչը, «Էջմիածին», 2021, թիվ 2., էջ 74–92, թիվ Է., էջ 61–73:

Կղեմէս Գալանոս 1650, Միաբանութիւն Հայոց սուրբ Եկեղեցոյն ընդ մեծի սուրբ Եկեղեցոյն Հռովմայ, հ. Ա, 531 էջ:

Հարությունյան Գ. 1999, Եկեղեցական աթոռների գահերեցության խնդիրը Աքքայի ժողովում (1263 թ.), «Պատմաբանասիրական հանդես», № 2, էջ 250–260:

- Հովհաննիսյան Ա.** 1957, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա., Երևան, 524 էջ:
- Ղազարյան Գ.** 2020, Անտիոքի պատրիարքության հայկական թեմերը (Ե-ԻԴ), «Արևելյան աղբյուրագիտություն», հ. 2, Երևան, էջ 389–421:
- Շիրինյան Է.Մ.** 2006, «Սեդրեստորոսի Վարքը» և «Դաշանց թուղթը», «Բանբեր Մատենադարանի», հ. 17, Երևան, էջ 53–77:
- Պալճեան Ա.** 1878, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս եւ միութեան նոցա ընդ հռոմեական եկեղեցոյ ի Փլորենտեան սինոդիոսի, Վենետիկ, 333 էջ:
- Օրմանեան Մ.** 2001, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Բ, Սբ. Էջմիածին, սյունակ 1871–3894:
- Acta Honorii III (1216–1227) et Gregorii IX (1227–1241), e registris Vaticanis aliisque fontibus collegit, Aloysius L. Tautu, Canonicus Magnovaradinen. Rumenorum e pontificia commissione ad redigendum C.I.C.O., Fontes series III, vol. III, Vaticanis, 1950, p. 400.
- Frazzee Ch.** 1976, Church and State in the Kingdom of Cilician Armenia. 1198–1375, Byzantine Studies/Etudes Byzantines, 3, part 2, p. 30–58.
- Halfter P.** 2009, L'Église arménienne entre la Papauté et les Byzantins aux XII^e et XIII^e siècles, “L'Église arménienne entre Grecs et Latins fin XI^e – milieu XV^e siècle”, Paris, S. 361.
- Halfter P.**, Das Papsttum und die Armenier im Frühen und Hohen Mittelalter: Von den ersten Kontakten bis zur Fixierung der Kirchenunion im Jahre 1198, Böhlau, Verlag, Köln, Wien, Weimar, 1996, S. 361
- Pogossian Z.** 2010, The letter of Love and Concord, A Revised Diplomatic Edition with Historical and Textual Comments and English Translation, Leiden • Boston, p. 475.
- Sirinian M.E.** 2003, “The Letter of Love and Concord” between Rome and Armenia. A Case of Forgery from the Crusaders Period. Orientalia Lovaniensia Analecta, 125. East and West in the Crusader States, Context - Contacts - Confrontations, III, edited by K. Ciggaar and H. Teule, Leuven, p. 79-99.
- Жаворонков П.И.** 1974, Никейская империя и Запад: (Взаимоотношения с государствами Апеннинского полуострова и папством), «Византийский временник», т. 36, с. 100–121.

**Ваге Г. Торосян, *Институт Истории НАН РА, к.и.н.*,
Армяно-латинские и армяно-византийские церковные
отношения в конце 1230-х – начале 1240-х гг.**

Резюме

В 1230–1240 гг. армяно-латинские и армяно-византийские церковные отношения заметно активизировались. Об этом свидетельствует переписка Папы Римского Григория IX, патриарха Константинопольского Германа II и Мануила I с Католиком Всех Армян Костантином I Бардзбердци, королем Киликийской Армении Хетумом I и королевой Забел. Изучение этих документов показывает, что рассматриваемые отношения были взаимосвязаны. Чтобы противостоять требованию Григория IX принять главенство латинского Патриархата Антиохии, которое было представлено армянскому католику, Костантин I Бардзбердци и Хетум I начинают переговоры о церковной унии с императором Никейским и с греческим патриархом Константинополя. Дипломатические усилия армянской стороны в итоге увенчались успехом, поскольку Григорий IX, обеспокоенный армяно-византийским сближением, отказался от своего требования.

Ключевые слова: Киликийская Армения, Костантином I Бардзбердци, Хетумом I, Григория IX, Герман II, Мануила I, Католикос Всех Армян, Папа Римский, Патриарх Константинополя.

Vahe H. Torosyan, *Institute of History of the NAS RA, PhD in History, Armenian-Latin and Armenian-Byzantine Church Relations at the end of the 1230s – the beginning of the 1240s*

Summary

Armenian-Latin and Armenian-Byzantine church relations became noticeably more active in 1230–1240. This is evidenced by the correspondence between Pope of Rome Gregory IX, Patriarch Germanus II of Constantinople and Manuel I with Catholicos of All Armenians Kostandin I Bardzberdtsi, King of Cilician Armenia Hethum I and Queen Zabel. As the study of documents shows, Armenian-Byzantine and Armenian-Latin church relations were interconnected at that time. In order to resist the Pope's demand to accept the primacy of the Latin Patriarchate of Antioch, which was presented to the Armenian Catholicos, Kostandin I Bardzberdtsi and Hethum I began negotiations on an ecclesiastical union with the Emperor of Nicaea and with the Greek Patriarch of Constantinople. The diplomatic efforts of the Armenian side was crowned with success, as Gregory IX, worried about the Armenian-Byzantine rapprochement, withdrew his demand.

Key words: Cilician Armenia, Kostandin I Bardzberdtsi, Hethum I, Gregory IX, Germanus II, Manuel I, Catholicos of All Armenians, Pope of Rome, Patriarch of Constantinople.